600.0041.10.02.21

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

10 փետրվարի 2021 թվականի №41Ա
քաղ. Երևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2008 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 29-Ի №96Ա ԵՎ 2018 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 14-Ի №36Ա ՈՐՈՇՈՒՄՆԵՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Էլեկտրոնային հաղորդակցության մասին» օրենքի 13-րդ հոդվածը, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 1-ին հոդվածի 2-րդ մասը, 33-րդ, 34-րդ հոդվածները, Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2011 թվականի ապրիլի 13-ի №169Ն և մայիսի 11-ի №231Ն որոշումները և հաշվի առնելով «Էլեկտրաէներգետիկական համակարգի օպերատոր» փակ բաժնետիրական ընկերության 2021 թվականի հունվարի 25-ի №01-ՄՄ-12/56 և փետրվարի 2-ի №01-ՄՄ-12/79 գրությունները՝ Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովը **որոշում է.**

1. Երկարաձգել Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2008 թվականի փետրվարի 29-ի «№ՌՌԳ/կ-061, №ՌՌԳ/կ-063, №ՌՌԳ/կ-064, №ՌՌԳ/կ-066, №ՌՌԳ/կ-067, №ՌՌԳ/կ-068 թույլտվությունները վերաձևակերպելու և դրանց գործողության ժամկետը երկարաձգելու մասին» №96Ա որոշմամբ «Էլեկտրաէներգետիկական համակարգի օպերատոր» փակ բաժնետիրական ընկերության անվամբ վերաձևակերպված և նոր խմբագրությամբ շարադրված ռադիոհաճախականությունների օգտագործման №0334 թույլտվության գործողության ժամկետը՝ որոշման 1-ին կետում «մինչև 2021 թվականի մարտի 1-ը» բառերը փոխարինելով «մինչև 2022 թվականի մարտի 1-ը» բառերով, իսկ 2-րդ կետով հաստատված և նոր խմբագրությամբ շարադրված հավելվածից հանել 65,1ՄՀց և 69,4ՄՀց ռադիոհաճախականությունները:

2. Հանել Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2018 թվականի փետրվարի 14-ի «Էլեկտրաէներգետիկական համակարգի օպերատոր» փակ բաժնետիրական ընկերությանը ռադիոհաճախականությունների օգտագործման թույլտվություն տրամադրելու մասին» №36Ա որոշմամբ տրամադրված №1243 թույլտվության պայմանների 4-րդ կետի 1-ին, 5-րդ և 7-րդ ենթակետերի աղյուսակների 5-րդ կետը:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում «Էլեկտրաէներգետիկական համակարգի օպերատոր» փակ բաժնետիրական ընկերությանն օրենքով սահմանված կարգով իրազեկելու օրվան հաջորդող օրվանից՝ բացառությամբ 1-ին կետի, որն ուժի մեջ է մտնում 2021 թվականի մարտի 1-ից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ՝ **Գ. ԲԱԴՐԱՄՅԱՆ**

ք. Երևան
10 փետրվարի 2021թ.